

ԲԱՆԱԿԱԳՈՐԾՈՒՄ

ԱՅԾԵՄՆԻԿ ՈՒՐԱՐՏՈՒ

Գրեց՝ ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Գրադրություն  
Արամ Երեմեան  
Գրադրություն — Մարտիրոս  
ԹԷՂԱՆ, 1948



493






ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒՅԻ  
ԱՅԾԵՄՆԻԿ ՈՒՐԱՐՏՈՒ

4



## ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ



Հայ առաջին վաստակաւոր քանդակագործու-  
հին է ԱՅԾԻՍՆԻԿ ՌԻՐԱՐՏՈՒՆ, որ այսօր յաղ-  
թական կանգնել է իր գեղարւեստական գործունէու-  
թեան 20-ամեակի շէմքին: Երկու տասնամեակ է, որ  
նա իր ամբողջ էութեամբ եւ լաւագոյն տւեալներով  
նւիրել է քանդակագործական արւեստին: Այդ ժա-  
մանակօշիջանումն էլ նա իր կերտած արձաններով  
ուշագրաւ նստումներ է արել եւ զարկ տել հայ գե-  
ղարւեստին: Չնայած այդ հանգամանքին, նրա կեան-  
քի եւ ստեղծագործութեան հիմնական գծերի մասին  
մինչեւ օրս էլ ցայտուն գաղափար չունեն ո՛չ միայն  
իրանի, այլեւ արտասահմանի գեղարւեստասէր հայ  
հասարակութեան լայն խաւերը: Ծիշտ է, Ուրարտուի  
մասին, իր մի շարք արձանների լուսանկարներով,  
սեղմ՝ յօդածներ հրատարակել եմ Նիւ-Եօրկի «Հա-  
յաստանի Կոչնակ»-ում, Փարիզում պ. Արշակ Զօպան-  
եանի խմբագրած «Անահիտ»-ում (1936 թ., թիւ 4-6),  
Թէհրանի «Վերածնունդ»-ում (1943 թ., թիւ 757-8),  
Փարիզի «Հակաֆաշիստ»-ում (1944 թ., թիւ 7, 8, 9),  
քայց նրա քանդակագործութեան անցած ուղին եւ


ստեղծագործական արեստի էութիւնը դեռ չի լուսարանւած: Ահա այդ կարեւոր բացը լրացնելու նպատակով այսօր, քանդակագործուն հու գործունէութեան 20-ամեակի առիթով, այս գրքոյկը յանձնում եմ հայ գեղարեստի պատմութեան:

Այստեղ ընդգծեմ նաեւ այն, որ սոյն գրքոյկի հրատարակութեան ծախքը հոգացել է իրանահայ յայտնի քուրերար եւ հասարակական անձնւէր գործիչ՝ պ. ՌՌՄԱՆ ԻՍԱԵԻԸ, որին հրապարակով յայտնում եմ խորին շնորհակալութիւններս:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թէհրան

26 Ապրիլ 1948





ՔԱՆԴԱԿԱԳՈՐԺՈՒՅԻ

## ԱՅԾԵՄՆԻԿ ՈՒՐԱՐՏՈՒ

(Նրա գործունեության 20-ամեակի առիթով)



I

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԺՈՒՅԻՆ

Հայոց պատմութեան էջերը թերթելիս, դժբախտաբար, չենք հանդիպում մի որևէ արձանագործուհու անւան: Այդ մասին լուռ է նոյնպէս հայ գեղարւեստի պատմութիւնը: Չենք տեսնում մի քանդակագործուհու պայծառ դէմքը, որ իր արւեստով դարերի խորքից խօսէր մեզ հետ և իր ստեղծագործութիւններով գաղափար տար հայ

հնագոյն արձանագործութեան ուղղութեան, ոճի և տէխնիկայի մասին\*)։ Ահա թէ ինչո՞ւ այսօր առանձին նշանակութիւն է ստանում այն կին արւեստագէտը, որն իրեն ամբողջապէս նւիրել է քանդակագործութեան և կերտել է մէկը միւսից գեղեցիկ արձաններ, որոնք վկայում են նրա գեղարւեստական նուրբ ճաշակի և արւեստի խորութեան մասին։ Դա Այծեմնիկ Ուրարճունն է, առաջին հայ արձանագործուհին\*\*)։, որ իր ստեղծագործութեան 20-ամեակի ընթացքում քանդակագործութեան գծով արել է լուրջ նւաճումներ և շնորհիւ իր ձեակերպւած ու վարպետ մուրճի՝ կարճ ժամանակում կարողացել է իր ուրոյն տեղը գրաւել Երևանի տաղանդաւոր արւեստագէտների շարքում։

Երևանում ապրում և ստեղծագործում են

---

\*) Երևանի պատմական թանգարանի միջնադարեան հայ արւեստի ցուցասրահում դտնւում է մի բարձրաքանդակ։ Դա 7-րդ դարի քանդակագործական արւեստի մի թանկագին մնացորդ է, որ պատկերում է խաղող հաւաքող կինը։

\*\*) Հայ արւեստի պատմութեան մէջ անպայման իր ուրոյն էջն ունի նաեւ թրքահայ և բնիկ թալասցի մի այլ լաւագոյն քանդակագործուհի։ Դա Մարի Արեւմեդեանն է, որ 35 տարեկան հասակում գերեզման իջաւ Կ. Պօլսում։ 1946 թւին նա իր կիսանդրիներով մասնակցելով Պօլսում կադմակերպւած սեռական նկարչական և արձանագործական ցուցահանդէսին, շահեց առաջնութիւնը։ Անգարայի թուրք կառավարութիւնը բարձր գնահատելով նրա արւեստը, արժանացրեց նրան մրցանակի։ Նա պատրաստել է գլխաւորապէս հայ բանաստեղծների արձանները և այլ գեղարւեստական քանդակներ։ Ար. Եր.

երկու այլ յայտնի քանդակագործներ՝ Արա Սարգսեան և Սուրեն Ստեփանեան, որոնց քանդակած արձանների մի մասն այսօր դարդարում են Հայաստանի գեղածիծաղ մայրաքաղաքի՝ Երևանի, գլխաւոր փողոցները և կերպարւեստի պետական թանգարանը։ Ահա այդ քանդակագործների շարքում, իր ինքնատիպ արւեստով, հպարտ կանգնել է նաև Ուրարտուն, որի ուղին մէկ է և դրօշը պարզ։ Դա քանդակագործութեան դժւարին, բայց վեհ ասպարէզն է։ Նրա հմուտ մուրճի հարւածների տակ կեանք են առել եւ քարը, եւ գրանիտը, եւ մարմարը, եւ ժայռը, որոնցից նա քանդակել է մի-մի կենդանի, խօսուն տիպարներ, գեղարւեստական արժէքաւոր արձաններ։

Երևանում էլ գտնւում է նրա արւեստանոցը, ուր նա լուռ ու մունջ ստեղծագործում է, քանդակելով գեղեցիկ արձաններ, որոնք վաղ թէ ուշ ուրոյն տեղ են գրաւելու հայ գեղարւեստի պատմութեան մէջ։

1946 թւի Սեպտեմբերին, երբ Հայաստանի գրողների երկրորդ համագումարին մասնակցելու համար հրաւիրւեցի Երևան, քանիցս այցելեցի Ուրարտուի արւեստանոցը և մանրամասն ուսումնասիրեցի նրա քանդակած արձանները, որոնք պատմում են դիտողին արւեստագիտուհու ոչ միայն գեղարւեստական գործունէութեան ան-

ցած ուղու և ստեղծագործական արժէքաւոր աշխատանքների մասին, այլև գծում են նրա ուսուցիչական արւեստի պատկերը։ Այդ արձանների ետևում ցուանում է քանդակագործական լուրջ կրթութիւն ստացած և ինքնաշխատութեամբ կատարելագործւած վարպետ արձանագործուհին, որ իր քանդակներով կարողանում է խօսել ձեր հոգու հետ, յուզել ձեզ և իշխել ձեր զգացումների վրայ։ Այդպէս էլ պիտի լինի իսկական արւեստագէտը։

## II

### ԿԵՍՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԺԵՐԸ

Կարճ է Ուրարտուի ուսման և զարգացման պատմութիւնը։ Նրա ծննդեան (1899 թ.) և մանկութեան էջերը տանում են ձեզ Կարս, որի գեղատեսիլ բնութեան պատկերները զարթեցնում են նրա հոգում գեղեցիկի զգացում և նուրբ ճաշակ։ Դեռ փոքր հասակից կաւով կաղապարներ պատրաստելու, միաժամանակ նկարելու մեծ հակում է ցոյց տալիս, իսկ գիմնազիայի 8-րդ դասարանը վերջացնելուց յետոյ, 1918 թւականին մտնում է Ստաւրոպոլի բարձրագոյն դպրոցը, ապա անցնում է Մոսկւայի գեղարւեստական ուսումնարանը, ուր բաւական պայծառ դրսևորւում են նրա քանդակագործական հակումները։ 1923

Թւին մտնում է Բագուի քանդակագործական դըպ-  
րոցը, ուր ուսումնական արձանագործ և իւղա-  
նըկարիչ՝ Էրզիսյի\*) մօտ ուղիղ երեք տարի  
արւեստի լուրջ կրթութիւն է ստանում: Էրզիան,  
որ այդ ժամանակ արդէն բաւական խոշոր համ-  
բաւ էր վայելում, մեծ ազդեցութիւն է թող-  
նում Ուրարտուի գեղարւեստական ճաշակի վրայ:  
Դրանով էլ փակւում է նրա ուսումնական շրջա-  
նը: Սակայն, բնածին ձիրքը, յամառ ու աննկուն  
աշխատասիրութեան ոգին և խոր ուսումնասիրու-  
թիւնները բանում են նրա առաջ ստեղծագործա-  
կան աշխատանքի փայլուն ու նոր ուղի և նա  
օրէց օր կատարելագործւում է ու առաջադիւժում:

Առաջին անգամ նա հանդէս է գալիս 1926  
թւին, մասնակցելով ուսական «Քանդակագործ-  
ների Ընկերութեան» կազմակերպած առաջին  
ցուցահանդէսին, որը բացւում է Մոսկւայի պատ-  
մական թանգարանում: Դա նշանաւոր մի երևոյթ

---

\*) Այս տաղանդաւոր արւեստագէտն երկար տարիներ ապ-  
րել և ստեղծագործել է Արժանթինում, գրաւելով դժւարահաճ գե-  
ղարւեստագէտների ուշադրութիւնը: Նրա քանդակած արձանների  
մեծ մասը գտնւում է արւեստագէտների մօտ և Արժանթինի քա-  
ղաքային թանգարանում: Արժէքաւոր մի քանդակն էլ առել է Քին-  
քելա Մարտին թանգարանը, որպէսզի դարդարէ Միտլէի հրապա-  
րակը: Նոյնպէս նրա հարիւրաւոր գործերը գնել են անգլիական,  
գերմանական, ֆրանսիական և իտալական հաստատութիւնները:  
Վաստակաւոր արւեստագէտը 1947 թւին սով. իշխանութեան կող-  
մից հրաւիրւեց իր թանկագին հայրենիքը: Ար. Եր.

էր նրանով, որ Մոսկւայի տարբեր ժողովուրդ-  
 ների բոլոր անւանի արձանագործները, արհա-  
 մարհելով ազգայնական նեղ սրամադրութիւններն  
 ու նախապաշարութիւնները, համախմբւում են եղ-  
 բայրական համագործակցութեան դրօշի տակ և  
 կազմակերպում առաջին քանդակագործական մեծ  
 ցուցահանդէսը, որին Այծեմիկը մասնակցում է  
 «Անապաստանը» և «Հանգիստը» քանդակներով,  
 որոնք իրենց նրբութեամբ ու վարպետութեամբ  
 ոչ միայն ցուցահանդէսի յանձնաժողովի կողմից  
 բարձր գնահատութեան են արժանանում և գրա-  
 ւում Մոսկւայի գեղարւեստասէր հասարակու-  
 թեան ուշադրութիւնը, այլև վկայում ապագայ  
 լաւագոյն քանդակագործունի ու մասին: Այնուհետև  
 Ուրարտուն վերջնականապէս հաստատւում է Ե-  
 րևանում և ամբողջովին նւիրւում քանդակագոր-  
 ծութեան արւեստին: Իր կերտած նոր արձան-  
 ներով նա մասնակցում է մայրաքաղաքում կազ-  
 մակերպւած բոլոր ցուցահանդէսներին: Այդ շրջ-  
 ջանում անդամակցում է նաև Մոսկւայի «Էո-  
 սա» քանդակագործական Ընկերութեան, Երևանի  
 «Կերպարւեստի Միութեան» և «Յեղափոխական  
 ռուս արւեստագէտների Միութեան» Հայաստանի  
 մասնաճիւղին: Նշւած բոլոր հանգամանքներն էլ  
 ընդգծում են նրա գեղարւեստական արժանիքը:

III

ԱՐԻԵՍՏԻ ԷՍԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՉՆԵՐԸ

Խորացէք Ուրարտուի քանդակած արձան-  
ների էութեան մէջ, վերլուծէք նրանց հիմնական  
գծերը, բնորոշ կառուցւածքը, ոճը, ուղղութիւ-  
նը և դուք այնտեղ պիտի տեսնէք նրա գեղար-  
ւեստի էական յատկանիշները: Այդ արձաններն  
ամենից առաջ ընդգծում են, որ նա տաղանդաւոր  
քանդակագործուհի է, որի արւեստն ուշագրաւ է  
ոչ միայն իր կուլտուրայով, այլև գեղարւեստա-  
կան նրբութեամբ և ստեղծագործական հարուստ  
պարունակութեամբ:

Սակայն, այստեղ նշեմ մի կարևոր հան-  
դամանք: Ամէն մի արւեստագէտ արժանի է ու-  
շադրութեան, երբ նա ամենից առաջ ապրում է  
իր դարաշրջանի հասարակական կեանքով: Ու-  
րարտուն կանգնած է ստեղծագործական ուշադի-  
տական ուղու վրայ. նա խորապէս ըմբռնել է իր  
կոչումը, հասկացել է, որ իր պարտականութիւնն  
է արտայայտել իր ապրած ժամանակի երևոյթ-  
ները: Այդ հանդամանքով էլ պիտի բացատրել, որ  
նրա արձաններում գլխաւորապէս տեսնում էք  
իրական արւեստ: Դա նոր կեանքն է, Դա միա-  
ժամանակ ուշադիտական արւեստի յաղթանակն  
է, որի առջև խոնարհւել են քանդակագործական  
դպրոցի տարբեր ուղղութիւնները:

—Իմ գլխաւոր ուղղութիւնը,—ընդգծում է Ուրարտուն ինձ գրած նամակում,—սոցիալիստական ուղիովն է:

Մի երևոյթ անժխտելի է, որ Ուրարտուն կանգնած լինելով ուսական և արեւմտա-եւրոպական ժամանակակից գեղարւեստական քանդակագործութեան լաւագոյն նւաճումների պատւանդանի վրայ, մերժել է այն բոլոր ձևական, անկուսային ու վերացական մօտեցումները և ուղղութիւնները, որոնք մինչև օրս էլ տիրում են բուրժուական արւեստի մէջ:

Այնուհետև արձանագրեմ նրա արւեստի մի այլ յատկանիշը: Նա իր ձեռքում բարձր է պահել ոչ միայն ուղիստական քանդակագործութեան դրօշը, ոչ միայն ձգտել է հարադատօրէն վերարտացուել հասարակական կեանքի տարբեր էջերը, կերտելով կեանքի աւիւնով լի իրական կերպարներ և գեղարւեստական մնայուն արձաններ, այլև աշխատել է օգտագործել հայ ժողովրդի արւեստի հարուստ ժառանգութեան լաւագոյն ձևերն ու աւանդները, աշխատել է դրսեւորել և խորացնել հայկական դարաւոր մշակոյթի էական գծերը: Առհասարակ, Ուրարտուն մէկն է այն քանդակագործներից, որն ուսումնասիրելով հայոց բազմադարեան պատմութիւնն ու արւեստը, կարողացել է ստեղծագործել ինքնատիպ ար-

ձաններ, որոնք պատկերում են ոչ միայն նորը, այլև մասամբ էլ հինը։ Դա ցոյց է տալիս, որ նա սերտորէն կապւած է իրականութեան հետ և միաժամանակ լաւ է ճանաչում մեր անցեալի պատմութիւնը։ Թերևս այդ երևոյթներով էլ պիտի բացատրել, որ նրա քանդակած արձանների կօմպօզիցիայի, գծերի, ձևերի և նիւթի պատկերաւորութեան մէջ տեսնում էք ոչ միայն լուրջ մօտեցում, այլև բարձր արւեստ և կուլտուրա։ Դրա վրայ աւելացրէք և այն, որ քանդակների նրա մեկնաբանումը միշտ էլ համապատասխան է բովանդակութեանը։ Ահա թէ ինչո՞ւ այնքան այլազան են, այնպէս իրար նման չեն արւեստագէտի կերտած արձանները, հանգամանքներ, որոնք արժէքաւորում են նրա ստեղծագործական դիմագիծը։

Արձանագրեմ Ուրարտուի արւեստի մի այլ բնորոշ գիծը։ Նրա քանդակները գրաւիչ են նաև իրենց պարզութեամբ և գեղարւեստական ներդաշնակութեամբ, երևոյթներ, որոնք առաջին հայեացքից իսկ գրաւում են ձեր ուշադրութիւնը։ Աւելին։ Քանդակագործ ուհու արձաններն այնքան պարզ են և բնական, որ այդ պարզութեան մէջ դուք զգում էք նրա արւեստի խորութիւնը։ Առհասարակ, պարզութիւնը, ներդաշնակութիւնը և խորութիւնը գերիշխում են Ուրարտուի արձաններում, գծեր, որոնք իւրաքանչիւր արւեստ-

տագէտի համար չափազանց դրական յատկանիշ-  
ներ են:

Կայ մի այլ կարևոր երևոյթ: Ամէն մի  
արձանագործի արւեստն արժանի է գնահատու-  
թեան, երբ նա տալիս է իր քանդակած կերպա-  
րի ոչ միայն արտաքին պատկերը, այլև դրսևո-  
րում է նրա ներքին՝ հոգեկան աշխարհի էութիւ-  
նը, նրա բնորոշ, առանձնայատուկ նկարագիրը:  
Ուրարտուն կանգնած է այդ լաւագոյն գծի վրայ:  
Իբրև հմուտ և հոգեբան արւեստագէտ, նա շատ  
լաւ է հասկացել, որ ամէն մի դիմաքանդակի  
հիմնական նպատակը պիտի լինի պատկերել տըւ-  
եալ անհատի հարադատ կերպարը՝ իր բնորոշ գծե-  
րով: Քանդակագործական արւեստի այդ էական  
հարցի մասին նա գրել է ինձ հետևեալը.

— Պորտրէ քանդակելիս անհրաժեշտ է ար-  
տաքին գծերի, դոկումենտալ նմանողութեան հետ  
մէկտեղ դրսևորել նաև տւեալ անձնաւորութեան  
ներքնաշխարհը, այսինքն՝ նրա հոգեբանականը,  
միայն այդ դէպքում պորտրէն կը ծառայէ իւր  
նպատակին:

Այդ գիտակցութեամբ էլ Ուրարտուն կեր-  
տել է իր արձանները: Իր քանդակներով նա ստեղ-  
ծագործել է կերպարների ոչ միայն իսկական  
պատկերները, այլև կարողացել է շատ յստակ կեր-  
պով վերարտադրել նրանց հոգեկան աշխարհի

էութիւնը, կարողացել է ցայտուն գծերով դրսևո-  
րել նրանց բնաւորութեան ու նկարագրի բնորոշ  
և էական յատկանիշները:

Այնպիսի խանգակելիս անհրաժեշտ  
է պարսկէն գծերի, շոկուճեպաւ  
նմանողութեամբ ինչ մեկտեղ շրտե-  
ւորել, նաև ցոյցաւ անշուստ  
բարձրաւ ներշնչութեամբ, պարսկէն  
նրա հոգեբանական, քաղա-  
կաց. շնչութեամբ պարսկէն լեզուով  
իւր նպատակը:

561

# Ա. ՈՒՐԱՐՏՈՒԻ ԻՆՔՆԱԳԻՐԸ

Մի հանգամանք պարզ է, որ Ուրարտուն  
դիմաքանդակների արւեստում գրաւում է իւրա-  
յատուկ տեղ, կերպարի մեկնաբանման իր ուրոյն  
մօտեցումով: Նրա քանդակած արձաններու, ինչ-  
պէս տաղանդաւոր նկարիչներ Ստեփան Աղաջան-  
եանի և Մարտիրոս Սարեանի վրձինած նկարնե-  
րում, անհատը ցոլանում է իր նմանողութեամբ,  
բնորոշ արտայայտութեամբ և իր էական ու  
պայծառ գծերով: Ահա թէ ինչո՞ւ Ուրարտուի ար-  
ձաններում տեսնում էք տիպարի ներքին բովան-  
դակութեան, արտաքին ձևաւորման և նիւթի սքան-

չելի ներդաշնակութիւն։ Դա արւեստի ասպարի-  
ղում, անկասկած, խոշոր նւաճում է, երբ իսկա-  
պէս իրագործւում է։

Ուրարտուն իր քանդակած մի շարք ար-  
ձանների մէջ դրել է նաև իդէա և տրամադրու-  
թիւն, գծեր, որոնք ինքնուրոյն են։ Թերևս դրա-  
նով պիտի բացատրել, որ նրա արձանները դի-  
տելիս ձեզ յուզում են տարբեր զգացումներ։ Նոյն-  
պէս նրա քանդակագործական արւեստում նկա-  
տելի է բանաստեղծական երանգ, որը համակում  
է ձեզ քնարական յոյզերով ու նրբին լիրիզմով։  
Ընդհանրապէս պիտի նկատել, որ Ուրարտուի ար-  
ւեստի նւաճումները գրաւում են ձեր ուշադրու-  
թիւնը և մեծ հետաքրքրութիւն առաջացնում դի-  
տողի մէջ։ Դա նշանակում է, որ նա ոչ միայն  
հմուտ քանդակագործուհի է, այլև կանգնած է իր  
կոչման բարձրութեան վրայ։ Դա նշանակում է  
և այն, որ նրա արւեստի զարգացումն անցել է  
որոշումների ու ձևակերպումների շրջանից և  
դրւած է ամուր պատւանդանի վրայ։

Էական է ընդգծել մի երևոյթ ևս, որը  
նշում է Ուրարտուի ստեղծագործութեան ուրոյ-  
նութիւնը։ Նա մէկն է այն առաջադէմ արւես-  
տագէտներից, որը խորապէս գիտակցել է, թէ  
Հայաստանի տնտեսական, քաղաքական, կուլտու-  
րական ոյժը և հայ ժողովրդի երջանկութիւնը

ոռւս և միւս ազգերի հետ միութեան ու եղբայ-  
րութեան մէջէ։ Այդ վեհ գաղափարը նա իր սըր-  
տում քանդակել է խորը կերպով։ Այդ հանգա-  
մանը պարզօրէն երևում է նրա պատրաստած  
մի շարք արձաններում՝ «Ստեփան Շահումեանի  
յուշարձանը», «Ռուս կիներ», «Ըմբիշ Սալի-Սիւ-  
լէյման» (1925 թւին ցուցադրւած է Մոսկւա-  
յում), «Շիրինի գլուխը» և այլ քանդակներ, ո-  
րոնք արձանագրում են, որ նրա արւեստն ունի  
ոչ միայն ազգային, այլև համամարդկային բնոյթ։

Ուրարտուի արւեստի հիմնական գծերը  
լուսաբանելիս պարզեմ և այն, որ նրա ստեղծա-  
գործութիւններում առանձնայատուկ տեղ են գը-  
րաւում կանանց և օրիորդների դիմաքանդակնե-  
րը։ Բայց այդ թէման նրա մօտ մի պատահական  
երևոյթ չէ։ Նա, որպէս բարեխիղճ քանդակագոր-  
ծուհի, խորապէս ուսումնասիրել է Վերածնու-  
թեան դարաշրջանի, գլխաւորապէս համաշխար-  
հային գեղարւեստի մի շարք առաջնակարգ վար-  
պետների գործերից այն կանանց տիպարները,  
որոնք արւեստի հոյակապ ստեղծագործութիւն-  
ներ են։ Նրա յիշողութեան մէջ առանձնապէս  
խոր տպաւորութիւն են թողել ինչպէս Ռեմբրան-  
դի «Դանաւան», Ռուբէնսի «Հեղինէ Ֆուրմանը»,  
Լէօնարդօ դա Վինչի «Զիօկօնդան», այնպէս էլ  
Ռաֆայէլի մադոնաները և Տիցիանի վներականե-

րը, բացառիկ արժէքներ, որոնք էլ աւելի բոցա-  
վառել են նրա հոգում արւեստի սէրը։ Այդ աղ-  
դեցութեան ներքոյ էլ նա քանդակել է բազմա-  
թիւ կնոջ կերպարներ։ Դրանք մեր ժամանակի  
այն պայծառ դէմքերն են, որոնք հասարակական  
կեանքում կամ արւեստի բնագաւառում նշանա-  
կալից դեր են կատարել և կատարում են։ Ահա  
թէ ինչո՞ւ այդ արձանները ոչ միայն քանդակա-  
գործական գեղեցկութիւններ են, այլև հասարա-  
կական տեսակէտից ուրոյն արժէք են ներկա-  
յացնում։

Վերջապէս արձանագրեմ, որ Ուրարտուի  
պատրաստած արձանները նրա ստեղծագործու-  
թիւնը հարստացրել են նոր բովանդակութեամբ,  
լայնացրել են նրա երևակայութեան, մտայղա-  
ցութեան և բովանդակութիւնն արտայայտելու  
ձևերի հնարաւորութիւնները։ Այդ քանդակնե-  
րում, նիւթի և տէխնիկայի տիրապետման ուղ-  
ղութեամբ, նա հասել է արդէն որոշակի վար-  
պետութեան, իսկ արձանների ստւար քանակը  
նրա մուրճը դարձրել է վստահ, վարժ ու հա-  
մարձակ և աշխատանքների որակն աւելի բարձր։

#### IV

### ՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Ուրարտուի ստեղծագործութիւնները զար-  
դարում են Երևանի և Հայաստանի այլ քաղաքնե-

րի թանգարաններն ու հրապարակները։ Այցելէք  
գլխաւորապէս մայրաքաղաքի՝ Երևանի, Կերպ-  
արւեստի, Պատմական և Կոմսունալ պետական  
հոյակապ թանգարանները, «Պուշկինեան» պու-  
րակը, յետոյ մտէք հայկական հնագոյն ոճով կա-  
ռուցւած տուֆաշէն սիւնազարդ բակի միջով Ու-  
րարտուի արւեստանոցը, գնացէք նաև Արզնիի  
հանքային ջրերի յայտնի հանգստավայր-բուժա-  
րանը, կամ Ստեփանաւանի «Շահումեանի» ան-  
ւան թանգարանը և կամ Յովհաննէս Թուման-  
եանի տուն-թանգարանի հրապարակը (Դսեղում),  
նոյնպէս այցելէք Մոսկւայի արևելեան կուլ-  
տուրաների թանգարանը և կամ Բագուի տէխնի-  
կական բարձրագոյն դպրոցը և պիտի տեսնէք  
քանդակագործուհու նուրբ արւեստով կերտած  
բազմապիսի արձանները։

Որո՞նք են, սակայն, Ուրարտուի մուրճի  
և բրիչի ստեղծագործութեան գլխաւոր մօտիւ-  
ները։— Ժողովրդի հասարակ տիպարները, աշխա-  
տանքի հերոսները, կեանքից արհամարհւածները  
(«Անապատատանը»), Հայաստանի դիտութեան,  
արւեստի, կուլտուրայի և այլ բնագաւառներում  
աշխատող մի շարք նշանաւոր դէմքերը — ահա նրա  
քանդակած գլխաւոր նիւթերը։ Հայրենական մեծ  
պատերազմի շրջանում նա իր ստեղծագործական  
միտքը կենտրոնացնում է նաև համաժողովրդա-

կան վեհ գործի վրայ, Դա հայրենիքի հանդէպ  
տաժաժ ջերմ զգացմունքն էր, որ դարձել էր  
քանդակագործութեան ներշնչման աղբիւր։ Առ-  
հասարակ, Ուրարտուի գործերը նիւթի տեսակէ-  
տից բազմակողմանի են և բազմազան։ Ստեղծա-  
գործել է նա մի շարք յուշարձաններ, Վիմանը-  
կարներ, քանդակել է կիսանդրիներ, զլուխներ և  
ամբողջական մարմիններ։ Մտնենք արւեստի այդ  
գեղեցիկ աշխարհը։

«Անապաստանը»։ Ուրարտուի քանդակաժ-  
առաջին արձանն է դա, որը գեղարւեստասէրնե-  
րի կողմից բարձր գնահատութեան է արժանա-  
ցել։ Ունի յուզիչ բովանդակութիւն։ Դա մի փոք-  
րիկ թափառաշրջիկ է, 1915 — 1918 թ. դաժան  
և մռայլ պատերազմի անմեղ զոհերից մէկը, որի  
դէմքի վրայ կարդում էք և՛ ծայրայեղ չքաւորու-  
թիւն, և՛ խոր թախիժ։ Բնորոշ է և այն, որ ցըն-  
ցոտիների մէջ փաթաթւած անմեղ մանուկը քան-  
դակւած է ծերունու դէմքի արտայայտութեամբ։

«Հայ աղջիկ կռժը ձեռիւն»։ Ուրարտուի  
լաւագոյն արձաններից մէկն է դա, որ քանդակել  
է 1939 թւականին, բազալտ քարի վրայ և այժմ  
դրւած է Երևանի «Պուշկինեան» պուրակում։  
Հայաստանի այդ գեղադէմ հայուհին կանգնել է  
իր պարթև հասակով՝ դարձ ու ժպտուն և որի  
երկու ձեռքով բռնած կժից հոսում է մայրա-

քաղաքի պաղ և կենսատու ջուրը: Նրա դէմքի նրբութիւնը, պայծառ ու արտայայտիչ աչքերը և հարուստ ու գեղեցիկ վարսերը գրաւչութիւն են տալիս իր դիմանկարին: Մի առանձին քնքըշութեամբ թեքել է նա կուժը և նայում է անուշ հայեացքով, որ արտայայտում է անմեղութիւն, պարզութիւն և պայծառութիւն: Չքնաղ հայուհին համակում է ձեզ իր յաղթական կեցւածքով և բանաստեղծական արտայայտութեամբ, ասես, նա աշխատասիրութեան և նւիրւածութեան խորհրդանիշն է, որի դէմքի վրայ կարդում էք և՛ տուկունութիւն, և՛ կամք: Արձանի գեղեցկութիւնը կազմում է նաև հայուհու գրաւիչ և առողջ մարմնի համաչափ կառուցւածքը: Քանդակն ունի նաև ազգագրական նշանակութիւն, որովհետև ցայտուն գաղափար է տալիս ձեզ ժամանակի տարադիմաստին, որ իր պարզութեան մէջ անքան գեղեցիկ է և ճաշակաւոր:

Այստեղ ընդգծեմ և այն, որ Ուրարտուն մէկն է հայաստանի քանդակագործական արւեստի այն վարպետներից, որ երկարատև ուսումնասիրութիւնների շնորհիւ՝ կարողացել է ստեղծել դիմաքանդակների մի ամբողջ շարք, որոնք հմուտ մուրճի ստեղծագործութիւններ են և գեղարւեստական ուրոյն արժէք են ներկայացնում: Ահա դրանցից մի պատկեր — «Հայուհի» (1927 թ.,

գտնւում է Երևանի պետական թանգարանում), «Աղբաշցի կոլխոզուհին» (1927 թ.), «Ապարանցի կոլխոզուհին» (1934 թ.), «Ախալցխացի կինը», «Բանւորական թղթակիցը», «Շիրիւնի գլուխը» («Փահրատ և Շիրիւն» պօէմից, գտնւում է Երևանի թանգարանում)։ Այս արձանները կերտելիս Ուրարտուն աշխատել է տալ ոչ միայն ներանց դէմքերի տիպիկ, բնորոշ գծերը, այլև ներքին էութիւնը, հոգեկան աշխարհը։ Այդ դիմաքանդակներում նա կերպարանաւորել է գլխաւորապէս այն բոլոր ձևերն ու գծերը, որոնք արտայայտում են անհատը, պատկերելով առանձնապէս ներշնչւած և վսեմ տիպարներ։ Առհասարակ, Ուրարտուն խորացել է այդ քանդակների մէջ, հասնելով տէխնիկական ակնյայտ վարպետութեան։ Ահա թէ ինչո՞ւ այդ արձանները, արւեստի տեսակէտից հանդիսանում են լաւորակ գործեր։

Սակայն, միայն այդ արձանները չեն Ուրարտուի մուրճի նւաճումները։ Հայ կնոջ գեղեցիկ յատկութիւններով օժտւած և կեանքում անքան համեմատ այս քանդակագործուհին, կարճ ժամանակում, արձանագործական արւեստի գծով ուշագրաւ գործեր է արտադրել։ Դեռ 1929 թւականին էր, որ նա Երևանում տարաւ նշանակալից մի յաղթանակ։ Դա հասարակական յայտնի գոր-

ծիշ՝ Ստեփանն Չախուսեանի արձանի կառուցման հանրապետական մրցութեան առաջին մրցանակն էր, որին մասնակցեցին նաև Հայաստանի յայտնի արւեստագէտները։ Ահա թէ ինչո՞ւ մրցումը նշանակալից էր և վճռական։ Դա պիտի որոշէր մասնակցող իւրաքանչիւր քանդակագործի ստեղծագործական ոյժը, կարողութիւնը և գեղարւեստական ըմբռնողութիւնը։ Եւ փաստն այն է, որ տաղանդաւոր արձանագործ ունին շահեց սահմանւած առաջին մրցանակը։ Այդ մասին Հայաստանի կենտրոնական Գործադիր Կոմիտէին կից «Շահութեան» յուշարձանի կառուցման Յանձնաժողովը գրել է հետեւեալը.

— Յանձնաժողովը համաձայնելով ժիւրիի կարծիքին և... մրցումից դուրս մասնակցողներին «Մոլոտ» նախագիծը համարելով արժէքաւոր... որոշեց գնել այդ նախագիծը 700 ռուբլով, որի հեղինակն է քանդակագործ Այծեմնիկ Ուրարտուն։

Նախագիծը ներկայացնում է ֆէդէրացիան։ Այնտեղ, պատւանդանի վրայ, կողք-կողքի, յաղթական կանգնել են ըանւորը, բանակայինը և գիւղացին։ Դրանք այն միաձուլ երրորդութիւնն են, որոնք իրենց վճռական պայքարով իրագործեցին ժողովուրդների անկախութիւնը։ Նախագիծը կենտրոնում իշխում են Հայաստանը, Ադրբէջանը և Վրաստանը։ Դա ազգերի եղբայրութեան

խորհրդանիշն է: Դա այն վսեմ գաղափարն է, որի իրագործման համար պայքարեց և հերոսաբար ընկաւ Ստեփան Շահումեանը: 1934 թւականին Ուրարտուն վերջացրեց այդ արձանը, որի պատւանդանի վրայից իր բարի և խոհուն հայեացքով նայում է Շահումեանը: Արձանագործուհին կարողացել է ցայտուն գծերով պատկերել առաջամարտիկի և ժողովուրդների իրաւունքների ջերմ պաշտպանի դիմանկարը: Քանզական երկար դիտելուց յետոյ տեսնում էք բազմաթիւ թանկագին մանրամասնութիւններ, որոնք արդիւնք են Ուրարտուի ստեղծագործական վառ երևակայութեան: Նշեմ և այն, որ արձանի կօմպօզիցիայի իւրաքանչիւր կերտւածքը դիւր է գալիս, իսկ ամբողջութիւնը լաւ տպաւորութիւն է գործում: Նոյնպէս քանդակի գեղարւեստական ոճը, ձևը, կառուցւածքն ուսումնասիրելուց յետոյ, զգում էք, թէ Այծեմնիկն որ աստիճան յաղթահարել է քանդակագործական արւեստի դժւարութիւնները:

Բայց Ուրարտուի ստեղծագործութիւնները միայն այդ արձաններով չեն սահմանափակւում: Նրա լաւագոյն քանդակների շարքում ունեն իրենց ուրոյն տեղը նաև բազմաթիւ կիսաքանդակներ: Դրանք հայ բանաստեղծութեան, երաժշտութեան, նկարչութեան, թատրոնին, պատմութեան և գիտութեան նւիրւած վաստակաւոր

գործիչներ են, որոնք հանդէս են եկել իրենց հոգեբանութեան և գործունէութեան յատկանշական, ուրոյն և բնորոշ գծերով, արձաններ, որոնք իրենց լոռութեամբ ոչ միայն խօսու են, այլև լաւ դպրոցի ու գեղարւեստական կամքի դրոշմ են կրում և արտացոլում քանդակագործունիութեան ինքնուրոյնութիւնն ու մուրճի համարձակ հարւածները:

Ահա կանգ եմ առնում Ուրարտուի լաւագոյն կիսաքանդակներից մէկի առջև: Դա Հայաստանի վաստակաւոր գրական մշակներից Նալիի Զարեանի արձանն է, որ ուշագրաւ է իր ունիւթական ոճով: Բնորոշ է բանաստեղծի խոհուն արտայայտութիւնը, որ պատկերում է այն վայրկեանը, երբ նա արտասանել է իր մի բանաստեղծութիւնը կամ գրական ճառը և յաղթական նայում է հասարակութեանը: Քանդակագործունին կարողացել է դրսևորել Զարեանի էութիւնը, որ թափով է, կենսունակ և ուժեղ: Այդ քանդակով Այծեմնիկին յաջողւել է կերտել արւեստի մեծարժէք մի գործ:

Ահա կենդանի և խօսուն դէմքով ինձ է նայում մի այլ ստեղծագործութիւն, որ պատկերում է Հայաստանի գիտութեան վաստակաւոր գործիչներից մէկին: Դա պրօֆ. Քէյեկն է: Քանդակում տեսնում էք ինքնամփոփ, խոհուն, որոնող և խորաթափանց հայեացքով գիտնականին:

Նա իր դիմագծերով անքան պայծառ է և հա-  
րազատ, որ արձանը դիտելիս իսկոյն ճանաչում  
էք, որ դա գիտութեան մշակ պրօֆ. Քէչեկն է,  
որը խորասուզել է մտքերի մէջ և, ասես, զբաղ-  
ւում է գիտական յուզող և հրատապ մի հարցով:  
Ուշադրութիւնս գրաւում է մի այլ ար-  
ժէքաւոր քանդակ, որ ամբողջ էութիւնս համա-  
կում է արւեստի յոյզերով: Դա Հայաստանի լա-  
ւագոյն ջութակահարներից Աւես Գաբրիելեանն է,  
իր երաժշտական խոր ապրումներով, մի արտիստ,  
որը ոչ միայն համամիութենական անւանի ար-  
ւեստագէտների շարքում արդէն գրաւել է իր ան-  
վիճելի, առաջնակարգ տեղը և նշանակալից ծա-  
ռայութիւն է մատուցել երաժշտական արւեստի  
ժողովրդականացման գործում, այլև Միութենա-  
կան Արւեստի Գործերի Յանձնախմբի յայտարա-  
րած լաւագոյն կատարողների մրցութեանը շահել  
է երկրորդ մրցանակը: Նայում եմ գեղարւեստա-  
կան արձանին և զգում արւեստագէտի վեհու-  
թիւնը: Ջութակի լարերի վրայ նրա ձեռքի նուրբ  
մատների հպումներն անքան կենդանի են քան-  
դակւած, որ, կարծես, լսում էք երաժշտութեան  
վերջին հնչիւնները: Դա Կոմիտասի ձայնագրած  
աննման «Գարուն» ն է: Արձանի գեղեցկութիւնը  
նրանումն է, որ ջութակահարն արտայայտւած է  
իր ամբողջ էութեամբ և հոգեկան հարուստ ապօ.

ըռւմներով:

Մօտենում եմ մի լուռ քարի, բազալտից  
կերտւած, որ ձևափոխւել և դարձել է մի գեղե-  
ցիկ քանդակ: Նայում է ինձ անքան սիրելի և  
անքան ծանօթ մի դէմք: Դա բանաստեղծ Յով-  
հաննէս Թուրանեանի կիսանդրին է, որի իսկա-  
կանն Ուրարտուն քանդակել է Թումանեանի  
տուն-թանգարանի բացման առիթով և գտնւում  
է նրա ծննդավայր Դսեղ (այժմ կոչւում է Թու-  
մանեան) գիւղի հրապարակում: Արձանն ուղաւորւաւ  
է նրանով, որ պատկերում է գրչի մշակին իր  
կենսուրախ, խոհուն և բանաստեղծական պայծառ  
դէմքով: Նայում է նա իր քարի հայեացքով: Գե-  
ղեցիկ է քանդակւած և գիրքը, որ, ասես, նրա  
ստեղծագործական ապրումների խորհրդանիշն է:

Ահա նոյնքան սիրելի և նոյնպէս գրաւիչ  
մի այլ պայծառ դէմք: Դա Ալեքի Իսահակեանն  
է, քնարական բանաստեղծութեան փայլուն աստ-  
ղը, որից անքան լաւ յուշեր և խորը տպաւո-  
րութիւններ ունեմ: Ուրարտուն պայծառ գծերով  
արտայայտել է ժողովրդական բանաստեղծի խո-  
հունութիւնը և նրա լիրիքական տրամադրութիւ-  
նը: Նա, ասես, խորասուզւել է մտքերի մէջ և  
խորաթափանց հայեացքով լուռ մտորում է: Իս-  
կական քնարերգութիւնն է ցոլանում նրա խո-  
հուն դէմքի վրայ: Դա ան լուսեղէն գիծն է,

որը կազմում է հայ ժողովրդի ստեղծագործական լաւագոյն յատկանիշներէից մէկը:

Շուտով գրաւում է ինձ նուրբ մարմարի վրայ քանդակած արձանը: Քա հայ ժողովրդի պարծանքը հանդիսացող տաղանդաւոր դերասանուհի Արուս Ոսկանեանն է, որի անունը սերտօրէն կապւած է հայ բեմի, մասնաւորապէս Երևանի «Սունդուկեանի» անւան թատրոնի, ստեղծման ու զարգացման հետ, մի արտիստուհի, որը յայտնի է ոչ միայն Անդրկովկասի եղբայրական ժողովուրդներին, այլև Մոսկւայի լայն հասարակութեանը: Նայում է նա իր արտիստական ամբողջ հմայքով, իր հոգու պարզութեամբ ու քնքշութեամբ, կարծես, ուզում է ապրել, երկար ապրել և երբէք չխաղալ մահւան յուզիչ դերը: Ուրարտուն անւանի դերասանուհու քանդակում մարմնաւորել է մի բարձր և վեհ իդէալ, որի քննարկագութեան մէջ ցոլանում է հայ թատրոնի վսեմ գաղափարը: Համակւած խորը հիացմունքով նայում եմ նրա նուրբ և պայծառ դէմքի արտայայտութեան, որ այնքան կենսունակ է ու խօսուն, մի դերասանուհի, որի հոգեբանական և գեղարւեստական նուրբ դերակատարութիւնն ու ստեղծած հոյակապ կերպարներն այնպէս խոր դրոշմւել են ինչպէս հաղարաւորների, այնպէս էլ իմ հոգում: Երբէք չեն մոռացւի նրա Դէզդէմո-

նան, Օֆելիան, Կրուչինան, Բդէիլը, Մարգարիտը, Մարիա Նիկալաևնան, Նորան և ուրիշներ։ Ահա թէ ինչո՞ւ չեմ ուզում հաւատալ, որ հայ բեմի աննման արտիստուհին այս աշխարհից մեկնել է անդարձ և այլևս երբեք չպիտի տեսնեմ նրա մյնջան նուրբ, մյնջան խորը և գեղարւեստական դերակատարութիւնը։

Ահա հայ բեմի մի այլ պարծանքը։ Դա դերասանական բարձր արւեստի խոշոր վարպետ և հասարակութիւնից սիրւած ժողովրդական արտիստուհի Յասմինկ Յակոբեանն է, որ աւելի քան 40 տարի նւիրել է հայ թատրոնին և թանկագին ծառայութիւն է մատուցել հայ ժողովրդի գեղարւեստական դաստիարակութեան և բեմական արւեստի ծաղկման ու բարգաւաճման գործում։ Նա մէկն է Երևանի «Փարրիէլ Սունդուկեանի» անւան պետական թատրոնի հիմնադիրներից, ուր էլ աւելի կատարելագործելով իր արւեստը և իւրացնելով նորագոյն կուլտուրայի նրւաճումները, կերտել է այնպիսի ցայտուն կերպարներ, որոնք այսօր առանձնայատուկ տեղ են գրաւում հայ թատրոնի պատմութեան մէջ։ Անմոռանալի են նրա ստեղծած դերերից յատկապէս Շուշանը («Պէպօ»), Խամփէրին («Խաթաբալա»), Շպանիկը («Նամուս»), Վասիլիսան («Յատակում»), Կաբենիիսան («Օստրովսկու «Ամպ-

րոպա-ում), Աննա Արտեմիճևան («Հարազատ մար-  
դիկ») և այլն, Բայց նա անփոխարինելի ոյժ էր  
ոչ միայն հայ թատերական արվեստի, այլև Հա-  
յաստանի շարժանկարի համար: Ո՞վ կարող է մո-  
ռանալ նրա ստեղծած Մարիամ Բաջին («Նամուս»),  
Զառնշանը («Զար Ոգի»), Շուշանը («Պէպօ»),  
Դեդին («Գիքոր») և ուրիշներ: Ահա հայ բեմի այս  
անւանի դերասանուհու յատուկ և բնորոշ գծերը,  
գլխավորապէս նրա նրբազգացութիւնը, գեղար-  
ւեստական խորութիւնն ու նրբութիւնն արտա-  
յայտւած են արձանում:

Ամբողջ չորս ժամ է, որ հիացմունքով դի-  
տում եմ և ուսումնասիրում Ուրարտուի արվես-  
տանոցի արձանները, միաժամանակ ապրում եմ  
ու ներշնչւում ոչ միայն քանդակագործական  
արվեստի բանաստեղծութեամբ, այլև ժամանա-  
կակից կեանքի տիպարներով: Աւետիք Իսահակ-  
եան, Արուս Ոսկանեան, Յասմիկ Յակոբեան, Նա-  
յիրի Զարեան, բոլորն էլ պայծառ անուններ, ո-  
րոնք ինձ այնքան մօտ, սիրելի դէմքեր են և  
ծանօթ եմ նրանց կեանքի հիմնական գծերի,  
ստեղծագործական տւեալների և արվեստի էական  
յատկանիշների պատմութեանը:

Ահա հայեացքս սևեռում եմ քանդակա-  
գործական արվեստի մի այլ գեղեցիկ ստեղծա-  
գործութեան վրայ: Դա ժողովրդական նկարիչ՝

Մարտիրոս Սարեանի բրօնզէ քանդակն է։ Այնտեղ  
Ուրարտուն կարողացել է պայծառ գծերով ար-  
տայայտել անւանի նկարչի հոգեկան աշխար-  
հը, նրա գեղարւեստական թափը, կորովը, ուժ-  
գընութիւնը և կենսունակութիւնը։ Քանդակագոր-



Ա. ՌԻՐԱՐՏՈՒՆ


ՆԿԱՐԻՋ Մ. ՍԱՐԵԱՆԻ ԱՐՁԱՆԸ ՔԱՆԴԱԿԵԼԻՍ

ծական պորտրէն այնքան կենդանի է, որ թւում  
է, թէ ահա մեծ արւեստագէտն ուղղում է կանգնել  
և խօսել նկարչական մի հրատապ հարցի մասին։

Նոյնքան հմուտ մուրճի արտադրութիւն է  
Սարեանի քանդակի մօտ իշխող կիսարձանը, որ  
նայում է այնքան կենդանի և հարազատ արտա-

յայտութեամբ: Դա տաղանդաւոր երգչուհի՝ Հայկանուշ Դանիէլեանն է, Երեանի օպերայի հիմնական սիւներից մէկը, որ իր հրաժշտական արւեստի բարձր կուլտուրայով, հմտութեամբ ու իր կերտած բազմաթիւ հիասքանչ բեմական կերպարներով ուրոյն տեղ է գրաւում հայ երգի արւեստի և օպերային թատրոնի պատմութեան մէջ: Լուրջ, ինքնամփոփ ժողովրդական արտիստուհու դէմքի ցայտուն գծերը պարզ արտայայտւած են քանդակում: Այդ արձանում ևս Ուրարտուն դրսևորել է քանդակելու նուրբ ձև:

Այլ բովանդակութիւն ունի նկարչուհի Սեդա Ղարազեօղեանի արձանը, որի գեղարւեստական գիծը ևս ունի ստատական ոճն է և հոգեբանական վերլուծութիւնը: Ուրարտուն պայծառ գծերով արտայայտել է նկարչուհուն հեզ, խոնարհ և ամօթխած բնաւորութեան էական յատկանիշները: Կարողացել է նրա ներքին աշխարհը նըրբութեամբ ու խորութեամբ արտայայտել իր դէմքի վրայ:

 Բանդակագործական ուշագրաւ կոթող է Յովհաննէս Թումանեանի յուշարձանը: Ժողովրդական բանաստեղծի ծննդեան 70-րդ տարեդարձի առիթով, Հայաստանի Լուսաւորութեան Գործավարութեան յանձնարարութեամբ, Ուրարտուն 10 մետր բարձրութիւն ունեցող պատւանդանի

և Լօռիի գեղեցիկ ժայռոտ բնութեան ֆօնի վրայ  
քանդակելու է տաղանդաւոր պօէտի յուշարձանը,  
կերտւած է արդէն պատւանդանը: Հայաստանի  
բազալտ (քար) ժայռերի վրայ զանազան դիրքե-  
րով իշխում են մեծանուն բանաստեղծի պօէմ-  
ների, հէքիաթների և պատմածքների աչքի ընկ-  
նող հերոսները, որոնք քանդակւած են իրենց  
էական և առանձնայատուկ գծերով: Այնտեղ ձեր  
ուշադրութիւնը գրաւում են մի շարք լիրիքական  
դէմքեր՝ իրենց քնարական ապրումներով ու յոյ-  
դերով — վշտաբեկ Անուշը, որ ուժասպառ յենւել  
է ժայռին, մօտը՝ վշտահար Սարօն: Ահա ժայռի  
գլխին տխուր նստել է տարաբախտ և տխրադէմ  
Մարօն: Դէպի աջ՝ քանդակւած է լեռների զա-  
ւակ պարզամիտ հովիւ Սաքօն, սրինգը ձեռքին  
և կամ թամարը, որ հայեացքը յառել է Ախթա-  
մար լճին և սրտատրոփ սպասում է իր սիրածին:  
Ահա և Թմբկաբերդի գեղեցիկ տիրուհին՝ դաւա-  
ճան Ալմաստը կամ աշուղը, որ իր սաղի լարե-  
րի վրայ գովերգում է թագուհու գեղեցկութիւ-  
նը: Քիչ հեռու՝ տարաբախտ փոքրիկ Քիբօրն է,  
որ հօրը հետ վառ յոյսերով քաղաք է գնում:  
Կանգնել են նաև երկու աժդահա հսկաներ՝ Սա-  
սունցի Դաւիթը և Մսրայ Մելիքը: Պատւանդանի  
վերևում պիտի իշխէ Թումանեանի բրոնզից ձուլ-  
ւած արձանը:

Բանաստեղծ Քուլմանեանի յուշարձանի աջ կողմը գտնւում է մի այլ ուշադրաւ արձան: Դա «Ճախսէօր»-ն է, նոր կեանք ու կենցաղ կերտող հարւածայինը. շինարարութեան ակտիւ մասնակիցը, որ իր բովանդակութեամբ ազգագրական նշանակութիւն ունի: Այդ աշխատանքի հերոսի պարզ և խոհուն դէմքի վրայ կարդում էք պատասխանատւութեան խոր զիտակցութիւնը: Ուրարտուն կարողացել է նրա դիմանկարի վրայ պատկերել հարւածայինի անձնւիրութիւնն ու լրջութիւնը: Նրա անպաճոյճ արտաքինի տակ տեսնում էք աշխատանքի բարեխիղճ հերոսին:

Ամէն մի գեղարուեստասէր Ուրարտուի արուեստանոցը մտնելիս՝ անհնար է, որ կանգ չառնէ մի հոյակապ արձանի առջև, ուր նրա արուեստը հասել է օրինակելի պարզութեան, խորութեան և ցայտունութեան: Դա գեղարուեստօրէն ամբողջացած մի արձան է, քանդակւած հմուտ մուրճով, բարձրաթռիչ երևակայութեամբ ու ջերմ շեշտով՝ մի քանդակ, որի կօմպօզիցիան մտածւած է և միևնոյն ժամանակ խորը զգացմունքով տոգորւած: Դա հայ պատմագրութեան փայլուն ներկայացուցիչ՝ Մովսէս Խորենացու քանդակն է, ուր տեսնում էք և՛ իդէա, և՛ տրամագրութիւն, և՛ բանաստեղծութիւն: Ահա թէ ինչո՞ւ արձանի խորհրդաւոր վեհութիւնը գրաւում է ձեր ամբողջ




ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ  
ԳՈՐԾ՝ Ա. ՈՒՐԱՐՏՈՒԻ

է ու թիւնը, Այնտեղ նշանաւոր քերթողահայր-պատ-  
մաբանը նստել է մի պարզ նստարանի վրայ և  
դլուխը մեղմ հպել ձախ ձեռքի մատներին, իսկ  
խորաթափանց հայեացքը յառել է գրքի էջերին,  
ասես, խորասուզել է դարերի խորքը և վերապ-  
րում է հայոց պատմութեամբ: Հիացած դիտում  
եմ հայ պատմութեան և մշակոյթի վաստակաւոր  
մատենագիրին, որ, կարծես, դարերի միջից կեանք  
է առել և բազմել այնտեղ իր բանաստեղծական-  
պատմագրական բոլոր վեհութեամբ: Նրա խոր  
ուսումնասիրութեան և տրամաբանական վերլու-  
ծութեան էական յատկանիշները տեսնում էք իր  
պայծառ ու իմաստուն աչքերի արտայայտու-  
թեան և խոհուն հայեացքի մէջ, որոնք այնքան  
կենդանի են և խօսուն: Նայում էք անւանի պատ-  
մագրի այնքան արտայայտիչ ու լրջախոհ դէմքին  
և զգում նրա բարոյական ոյժն ու պատմողական  
խոշոր տաղանդը: Նա խօսում է դարերի միջից,  
ասես, իր հռչակաւոր «Ողբ» ով խարաղանում է  
հասարակական տարբեր խաւերի հիմնական թե-  
րութիւններն ու պակասութիւնները: Քանդակին  
առանձին գրաւչութիւն և բանաստեղծական ե-  
րանդ են տալիս անւանի պատմաբանի լայն ճա-  
կատը, վեհափառ մօրուքը, ներդաշնակ մագերը  
և մանաւանդ նուրբ ծալքերով տարազը, որ հա-  
րադատ է Ծ-րդ դարի ազգագրական ոճին: Անկա-



**ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ**  
**ՔԱՆԴԱԿ՝ Ա. ՈՒՐԱՐՏՈՒԻ**



ընդի է երկար կանգ չառնել ծերունի պատմա-  
բանի, խոհուն և իմաստուն փիլիսոփայի գեղեցիկ  
արձանի առջև, որի գրաւիչ դէմքը կրում է իր  
վրայ հայ ժողովրդի աշխատասիրութեան անը-  
կուն ոգին, նրա անընկճելի կամքը և արւեստի  
ու գրականութեան հանդէպ տաժաժ անսահման  
սէրը։ Ուրարտուն կերտել է պատմագրի արձանի  
երեք տարբերակներ, երեք սքանչելի քանդակներ,  
որոնցից մէկը դրւած է Երևանի Մատենադարա-  
նի ձեռագրերի սրահում, իսկ միւսը պիտի դար-  
դարէ նոր մատենադարանի համար կառուցուող  
ճարտարապետական գեղեցիկ շէնքի հոյակապ  
մուտքը։


Ո՛րքան խորանում էք Ուրարտուի քան-  
դակների մէջ, այնքան էլ համոզւում, որ նա  
արտադրում է ինքնատիպ, զգացմունքով, նըր-  
բութեամբ ու հետաքրքիր մեկնաբանութեամբ  
պորտրէտային արձաններ։ Այդ քանդակներում  
նա, անկասկած, փայլում է թէ՛ ֆիզուրով, թէ՛  
կոմպոզիցիայով և թէ՛ հոգեբանական վերլուծու-  
թեամբ։ Արձանների արտայայտիչ դէմքերը, ֆի-  
զուրաների յատկութիւնները, քանդակելու պարզ  
ձևերը, ստեղծագործական ընդհանրացումների իւ-  
րայատուկ լուծումները և փաստական մշակում-  
ներն այդ աշխատութիւնները դարձնում են ար-  
ժէքաւոր և նշում դիմաքանդակի ժանրում Ու-

րարտուի առաջագիմութիւնը և փայլուն նւաճումնե-  
րը: Բնորոշ է և այն, որ Այծեմնիկը քանդակի  
ասպարիզում միշտ ձգտել է նոր ուղղութեան,  
մի երևոյթ, որն արձանագրում է նրա առաջա-  
գիմական ոգին: Այդպէս է «Սասունցի Դաւիթ»  
ժողովրդական դիւցազնավէպի հաղարամեակի ու-  
նակատարութեան աւիթով, 1938 թւին, նրա  
քանդակած հայ ժողովրդի սիրած հերոս՝ Դաւիթ  
Լերպարը, որ օժտւած է էպիքական և ուժանոտիկ  
տրամադրութեամբ, իսկ Էօմպօզիցիայի, արտա-  
յայտութեան տեսակէտից ոչ միայն հետաքրքիր  
է, այլև կերտւած է խոր զգացմունքով և գեղար-  
ւեստական շնչով: Ահաասարակ, արձանի դիւցազ-  
նական ոգին և էպիքական վեհութիւնը համա-  
պատասխանում են նրա ձևի պարզ, բայց գե-  
ղարւեստական կառուցւածքին:

Հայրենական պատերազմի տարիներին Ու-  
րարտուն, գիտակցելով իր պարտականութիւնը  
ժողովրդի և հայրենիքի հանդէպ, քանդակել է  
նոր արձաններ — «Կանայք հայրենական պատե-  
րազմում» (1942 թ.), «Սով. Միութեան հերոս  
օդաչու, մայեօր Անտօնով», «Երդում վշտաբեկ  
մօր վրէժի» և ուրիշներ, որոնց բովանդակու-  
թիւնը խիստ համապատասխանում է ժամանակի  
(1940—1945 թ.) տիրող մտքերի տրամադրու-  
թեանը: Այդ քանդակներով արձանագործուհին



ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԻԹ  
ՔԱՆԴԱԿ Ա. ՈՒՐԱՐՏՈՒԻ



ձգտել է ժողովրդական լայն զանգւածների մէջ վառ պահել հայրենասիրութեան, պայքարի և յաղթանակի բարձր ու վեհ գաղափարները։ Բայց Այծեմնիկը ձգտել է նաև մի այլ նպատակի, ինչպէս այդ ցոյց են տալիս նրա ինձ գրած նամակի հետևեալ տողերը.

— Այդ փորձերն ինձ մօտ տեղի են ունենում այն առումով, որպէսզի քանդակի միջոցով հնարաւոր լինի պատկերել կոլլէկտիւ (հաւաքական) կեանքը, որն առանցքն է կազմում մեր իրականութեան։

Այստեղ դիտեմ մի երևոյթ ևս, որ 1940. 1945 հայրենական պատերազմի տարիներին Ուրարտուի պատրաստած արձաններում նկատելի է երկու էական յատկանիշ — կերպարի հիմնական, բնորոշ գծերի պարզ պատկերացում և հոգեբանական խորութիւն։

Այծեմնիկի մուրճի գեղարւեստական նըւաճումներից մէկն է նաև «Բերխախաւաֆը», որ պատկերում է Հայաստանի կոլխոզային դաշտերի առատ բերք հաւաքողը։ Այդ գեղեցիկ արձանը նա աւարտել է 1945 թւին և ներկայացրել է Հայաստանի ՁԾ. ամեակին նւիրւած յորելենական ցուցահանդէսին։

Մի հանգամանք պարզ է, որ Ուրարտուն, իր ստեղծագործութեան վերելքի շրջանում, ար-

տաղրել է շատ արժէքներ, որոնք լիովին բնու-  
թագրում են նրա քանդակագործական արւեստի  
էութիւնը և հասարակական դիմագիծը: Այդ լա-  
ւագոյն արձաններէց յիշեմ, օրինակ, «Մայրն ու  
զաւակը, որ պատկերում է նոր ընտանիքը, նոր  
հասարակարգի մօր տիպարը, «Դէպի աղբիւր»  
(1936 թ.), «Ստեփան Զօրեան», «Հրաշեա Քո-  
չար», «Միութեան հերոս՝ մայօր Անտօնով», «Ա-  
նաստաս Միկոյեան» և ուրիշներ:

Հնարաւոր չէ, անկասկած, Ուրարտուի  
բոլոր գործերի վրայ կանգ առնել, որոնք վկա-  
յում են ոչ միայն նրա գեղարւեստական կեր-  
պարներ ստեղծելու ընդունակութեան և ուշալիս-  
տական արւեստի մասին, այլև հնարաւորութիւն  
են տալիս ձեզ ծանօթանալու նրա կուլտուրա-  
կան գործունէութեան, ստեղծագործական բնոյ-  
թի և արւեստի հիմնական յատկանիշների հետ:  
Մատնանշեմ նաև, որ նրա քանդակները չափա-  
զանց այլազան են իրենց բնաւորութեան գծերով:  
Այդ լաւագոյն արձանների թւին են պատկանում  
նաև հետևեալ գլխաքանդակները — «Բելայի գլու-  
խը» (1939 թ., գտնւում է Երևանի պետական  
թանգարանում), «Աղջկայ գլուխ» (1931 թ., մար-  
մարից), պատկերում է երեխայական քնքշութիւ-  
նը և կեանքի զարթնումը, «Անուշ»-ի գլուխը  
(1939 թ.), Յովհ. Թումանեանի համանուն պօէմի



ՄԱՅՐՆ, ՈՒ ԶԱՒԱՆՈՂ  
ԳՈՐԾ՝ Ա. ՌԻՐԱՐՏՈՒԻ

ՀԱՍ.Ի.Ա.Ն.Ը  
ԲԱՐՏՈՒԻ

հերոսուհին է, «Ալմաստ», (1934 թ., բրոնզից, գտնւում է թանգարանում)։ Դա «Թմբկաբերդի առումը» պօէմի գեղեցիկ թագուհու դիմաքանդակն է և արտայայտում է նրա երկու էական գծերը—վեհանձնութիւնն ու փառասիրութիւնը, «Կանացի գլուխ» (մարմարից, գտնւում է թանգարանում), «Հայ պատանին», որի դէմքի վրայ կարդում էք նրա ուսանելու անսահման սէրն ու եռանդը և հպարտութեան զգացումը, որ ինք առաջաւոր երկրի պատանին է։ Այս գործերը, որպէս բեղմնաւոր աշխատանքի ցայտուն վկաներ, իրենց ուրոյն լեզուով պատմում են քանդակագործուհու ստեղծագործական կեանքի մասին։

Դժւար է, անշուշտ, պատկերել իւրաքանչիւր կերպարի գծերը, բայց փաստն այն է, որ ձեր դիմաց տեսնում էք մի շարք պայծառ դէմքեր, որոնք իրենց լռութեան մէջ այնքան կենդանի են և խօսում։ Ահա թէ ինչո՞ւ այդ արձաններն ինքնուրոյն արւեստի առանձին գեղեցկութիւններ են, որոնցից շատերը գրաւում են ձեզ ոչ միայն իրենց գեղարւեստական նրբութեամբ, այլև նրբին լիրիզմով։

Ուրարտուի ստեղծագործութիւնների մէջ առանձնայատուկ տեղ է գրաւելու մի այլ քանդակ, որը պատրաստում է Երևանի Քաղսովետի Գործադիր Կոմիտէի պատւէրով։ Դա մեծատա-

դանդ կօմպօզիտօր՝ Աշխատանքի Մարտի 1-ին օրը  
արձանն է, որ պատկերելու է երաժշտագետին  
նստած դիրքով, միաժամանակ արտայայտելու է  
նրա երաժշտական արվեստի բարձր ըմբռնումը և  
ստեղծագործական արտակարգ հմտութիւնն ու  
խորութիւնը։ Արձանի բարձրութիւնը, պատւան-  
դանի հետ, ընդգրկելու է վեց ու կէս մետր և  
դրւելու է «Ալ. Սպենդիարեանի» անւան օպերայի  
ու բալետի պետական թատրոնի հրապարակում։

Ուրարտուն ծրագրել է կերտել նաև մի  
նոր քանդակ։ Դա «Աւետիք Խաչակեանը գրողնե-  
րի՝ Գեղամ Սարեանի եւ Յովհաննէս Զիրազի հետ»  
խմբական արձանն է, որ արվեստագիտուհու խո-  
րը սիրոյ արտայայտութիւնն է հանդիսանալու  
ժողովրդական մեծ բանաստեղծի և գրողների նը-  
կատմամբ։

Սակայն, Այծեմնիկի ստեղծագործութիւն-  
ների պատկերը լրիւ գծելու համար արձանագրեմ,  
որ դեռ 1944 թւին, Մոսկւայի «Տրետեակովսկի»  
պատկերասրահի դահլիճում, Հայաստանի նկարիչ-  
ների բացած ցուցահանդէսի քանդակագործական  
բաժնում, նրա արձանները բարձր գնահատական  
ստացան։ Նոյնպէս ուրոյն արժէք են ներկայաց-  
նում նրա միւս քանդակները, որոնք իրենց ար-  
վեստի նրբութեամբ, հոգեբանական բովանդակու-  
թեամբ և ուշադրատալան ունի պատիւ են բերում

նչ միայն վաստակաւոր արւեստագիտուհուն, այլև  
հայ քանդակագործութեան: Այդ երևոյթներն էլ  
ընդգծում են նրա գեղարւեստական պայծառ  
դէմքը:

V

ՎԵՐՋՍԵՆ

1924—28 և 1946 թւականներին, Երևա-  
նում, ամէն անգամ Ուրարտուի արւեստանոցի  
արձաններն ուսումնասիրելիս՝ ինձ համար պարզ-  
ւել է մի հանգամանք, որ նա մեր դարաշրջանի  
կնոջ լաւագոյն տիպարներից է. իսկ իր արժէքա-  
ւոր ստեղծագործութիւններով հանդիսանում է  
ժամանակակից հայ քանդակագործական արւեստի  
տաղանդաւոր մի դրօշակակիրը, որի երկու տաս-  
նամեակի ինքնուրոյն աշխատանքները հասցրել են  
նրան արձանագործական կուլտուրայի վարպե-  
տութեան: Եւ իրօք, նա ոչ միայն վայլուն ըն-  
դունակութիւններով օժտւած և կազմակերպւած  
հմուտ քանդակագործուհի է, այլև անընդհատ կա-  
տարելագործող արւեստագէտ, որի վերելքի զը-  
րաւականը գեղարւեստական այն պայծառ ուղին  
է, որ նա նոր նւաճումներով ու անվնաս ոգով  
անցել է 20 տարւայ իր քանդակագործական գոր-  
ծունէութեան ընթացքում: Մինչև օրս էլ նրա  
ստեղծագործական աշխատանքները զրոհորում  
են էլ աւելի նուրբ և նոր կերպարներով, որոնց

ցայտուն վկաներն են նրա կերտած 60 արձանները, որոնք նշանակալի աւանդ են հայ արձանագործութեան համար և որոնց ժամանակագրական կարգը ցոյց է տալիս նրա արւեստի աստիճանական զարգացումը դէպի ունակում:

Այժմ Ուրարտուն ամենաուերտ կերպով կապւած է Հայաստանի և ստեղծագործող ժողովրդի հետ: Այդ ժողովրդի և նրա կուլտուրական ու գիտական յայտնի դէմքերի կեանքից էլ նա վերցնում է իր մուրճի, իր քանդակի նիւթերը:

— Իմ ստեղծագործութեան աղբիւրն է մեր նոր կեանքն իր բոլոր ելէջներով: Ո՛չ պակաս նիւթ եմ քաղում նաև ժողովրդից, որը միշտ նոր և նոր թէմաների ու տիպերի աղբիւր է:

Այսպէս էր ասում Ուրարտուն ինձ դեռ 1926 թւականին Երևանում: Նոյն երևոյթն էլ ընդգծեց նա 1946 թւին, երբ նորից այցելեցի նրա արւեստանոցը:

Երկրի ժողովուրդը, դինամիկան, նոր թէմաները և անցեալի ու ներկայի նշանաւոր, պայծառ դէմքերն այսօր իրենց արտացոլումն են գտնում Հայաստանի գրեթէ բոլոր լաւագոյն արւեստագէտների աշխատանքներում: Ահա թէ ինչո՞ւ նրանց արւեստն առողջ է, կենդանի և գունեղ: Դա ունակումի ուղին է, որ հերոսական է իր բնոյթով, ձևով և բովանդակութեամբ:

# ՀՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆԻ ՀԵՏԵԻԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ



- 1 — Սպահանի Փէրիա գաւառը, աղգադրութիւն, պրօֆ. Հրաչ. Աճառեանի առաջարանով. Նոր-Ջուղա, 1919 թ.
- 2 — Իդէալիսը, պանտօմիմա. Նոր-Ջուղա, 1919 թ.
- 3 — Ա. Շուղ Յարբուհի Օղլի, Ա. — Նոր-Ջուղա, 1920 թ.
- 4 — Պարսկահայ աւուղներ, Բ. — Ամիր օղլի, Ղուլ Կադա և Աբդին օղլի, Նոր-Ջուղա, 1920 թ.
- 5 — Պարսկահայ աւուղներ, Գ. — Բադէր օղլի, Ղուլ Աբդունի, Ղուլ Սարգիս Շրիշկանցի և Միսկին. Նոր Ջուղա, 1921 թ.
- 6 — Զարմահալի ժողովրդական բանահիւտութիւնը, Հ. Ներսէս Ակինեանի առաջարանով. Վիեննա 1923 թ.
- 7 — Պարսկահայ նորագոյն աւուղներ, — Միսկին Մատթէոս, աշուղ Ալլահօղլի, Մարտիրոս Մանուկեան, Միսկին Ստեփան. Վիեննա, 1925 թ.
- 8 — Հայաստանի նկարիչների արձանախար, Արտաշէս Կալինեանի առաջարանով Փարիզ. 1926 թ.
- 9 — Սեւան, «Հայ նորագոյն կօմպօզիտօրներ». Ս. Ղազար — Վ. Կենտիկ, 1927 թ.
- 10 — «Արւես», նկարչական և երաժշտական պատկերազարդ երկամսեայ թերթ. Երևան, 1927 թ.
- 11 — Նկարիչ Սեփիան Աղաջանեան, Երևան, 1927 թ.
- 12 — Ա. Շուղ Ղուլ Յովհաննէս, Վ. Կենտիկ. 1929 թ.
- 13 — Պարսկահայ աւուղներ, Աշուղ Ամիր օղլի. Վ. Կենտիկ, Ս. Ղազար, 1930 թ.
- 14 — Պարսկահայ աւուղներ, «Վերածնունդ»-ի մատենադար. թէհրան, 1930 թ.
- 15 — Փերսոններ Ջուղահայ և Հնդկահայ բանահիւտութիւնից, Վիեննա, 1931 թ.
- 16 — Պարսկահայ բարձրի պատմութեան թւականը (Թիֆլիսի պետական տպարանների առաջարանով). Վ. Կենտիկ

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0568994

ԿԵԿ

1163

17—Թիֆլիսի հայկական պան

Ամսօրեայ-ի. Վիեննա, 1941

18—«Նալալի», Նոր-Ջուղայի ժող  
1941 թ.19—Նոր-Ջուղայի ԱՅ-րդ դարի որմանկարչական յուսար-  
ձանը, Գերշ. Տ. Գարեգին Արքեպ. Յովսէփեանի առաջաբա-  
նով. Նիւ-Նօրկ, 1944 թ.20—Էջեր Նոր-Ջուղայի որմանկարչութիւնից, Արշակ Զօ-  
պանեանի առաջաբանով. Փարիզ, 1945 թ.21—Ակադեմիկոս Աւեսիֆ Իսահակեանի պօլեգիայի հիմ-  
նական գծերը, Նոր Ջուղա, 1946 թ.

22—Առուդ Յարութն Օղլի, Թէհրան, 1946 թ.

23—Մի անյայտ ձեռագիր տաղարան, Թէհրան, 1947 թ.

24—Ներգահան Նիկոլ Դալանդլեան, Թէհրան, 1947 թ.

Գրանց  
Արշակ Ալպոյսանեան  
Դանիւրէ — Մարտի

ԳԻՆՆ Է 15 ՌԻԱԼ.

Ստանալու համար դիմել՝

Ar. Yerejian, Armenian School, Khiaban Naderi, Tehran (Iran).